Հետազոտական աշխատանք

Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ <<Աշակերտների առաջադիմության բարձրացումը համագործակցային ուսուցման միջոցով>>

Կազմեց՝ Սիլվա Հայրումյան

Ղեկավար՝ Լուսինե Սողոմոնյան

Կապանի N2 ավագ դպրոց՝ ՊՈԱԿ

Կապան 2022

Բովանդակություն

Նախաբան 2
Գրականության ակնարկ 4
Գործնական համատեքստ 6
Ամփոփում 11
Օգտագործված գրականության ցանկ 13

Նախաբան

Ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքների մատուցումը ուսուցչի կողմից, այլ գիտելիքների ձեռք բերման գործընթացին աշակերտին մասնակից դարձնելը:

Ուսուցիչը պետք է ցուցաբերի կառուցողական մոտեցում, կիրառի դասավանդման ժամանակակից մեթոդներ, առաջնորդվի նորարարական գաղափարներով՝ նպաստելով սովորողների հետաքրքրությունների ձևավորմանը:Այս խնդրիրների լուծմանը մեծապես նպաստում է համագործակցային ուսուցումը, որը բարձրացնում է սովորողների ակտիվությունը,ուսուցման պրոցեսը դարձնում է ավելի հետաքրքիր, բարձրացնում է աշակերտների առաջադիմությունը:

Այս հետազոտական աշխատանքի նպատակն է ցուց տալ, թե ինչպես է համագործակցային ուսուցումը նպաստում աշակերտների առաջադիմության բարձրացմանը: Մասնավորապես առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1.Ներկայացնել համագործակցային ուսուցման կազմակերպումը:

2. Համագործակցային ուսուցում կազմակերպելիս կիրառել մեթոդներ՝ նպաստելով աշակերտների ակտիվության բարձրացմանը:

3. Ներկայացնել միջանձնային և փոքր խմբերով աշխատելու հմտությունների ձևավորումը:

4.Առանձնացնել այն գործոնները , որոնք ազդում են աշակերտների առաջադիմության բարձրացմանը:

5. Գրանցել աշակերտների առաջադիմության շարժը:

6.Առանձնացնել համագործակցային ուսուցման առավելությունները և թերությունները:

Համագործակցային ուսուցման ժամանակ օգտագործվում են այնպիսի մեթոդներ, որոնք օգնում են ուսումնական նյութի առավել արդյունավետ յուրացմանը, նպաստում են սովորողների վերլուծական, ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Համագործակցային ուսուցման <<Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդը>> մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի

կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությանը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը կարևոր է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից օգնեն իրենց ընկերներին՝ պահպանելով իրենց ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն այն է, որ հնարավորություն է տալիս գնահատելու և՛ առանձին աշակերտներին, և՛ խմբերին:

Առաջադիմության հետ կապված տարբեր խնդիրներ կարող են ունենալ տարբեր պատճառներ.

1.աշակերտի ունակությունները ու կարողությունները

2.աշակերտի ադապտացիան դասարանում, դպրոցում

3.ուսուցիչների դերը սովորողների առաջադիմութան բարձրացման գործում մեծ է

Դրա համար անհրաժեշտ է ստեղծել բարոյահոգեբանական ջերմ մթնոլորտ, դասաժամին պետք է կիրառել ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնք նպաստեն աշակերտների ակտիվությանը և ներգրավվածությանը:Հետազոտական աշխատանքի թեման, կարծում եմ, արդիական է, քանի որ համագործակցային ուսուցումը նպատում է սովորողների ինքնուրույն և վերլուծական մտածողության զարգացմանը, պատասխանատվության բարձրացմանը և թիմով աշխատելու կարողության զարգացմանը:

Գիտելքիներ կիրառելու կարողունակության ձևավորումը մեծ արժեք է ներկայացնում մանկավարժության մեջ և ընդհանրապես կրթական ոլորտում:

Վերջիններիս ձևավորմամբ պայմանավորված՝ բարձրանում է աշակերտների առաջադիմությունը:

Գրականության ակնարկ

Առաջադիմությունը չափորոշչի պահանջներին աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի համապատասխանության աստիճանն է: Այսօր մանկավարժության մեջ առաջադիմությունը սահմանվում է հետևյալ կերպ.<<Ուսումնական ծրագրով նախատեսված և հաստատված գիտելիքների, հմտությունների, կարողությունների յուրացման մակարդակ՝ դրանց ամբողջականության, խորության , բազմակողմանիության, գիտակցվածության և ամրության տեսակետից>>:

[Новикова А.<<Педагогика.Словарь системы основных понятий.М:2013, էջ 252]

Թեև աշակերտներն ունեն տարբեր ունակություններ և կարողություններ, բայց ուսումնական գործընթացում կիրառվող մեթոդները և միջոցները մեծապես նպաստում են առաջադիմության բարձրացմանը:

Կալմիկովան սովորողների հնարավորությունների մեջ առանձնացնում է երկու կարևոր ասպեկտներ՝ֆիզիկական և հոգեբանական հնարավորություններ:

Կրթության բովանդակային պահաջները չպետք է գերազազանցեն սովորողների հնարավորությունները:

[Калмикова Е. Проблема преоделения неуспеваемости глазами психолога-М:2002 էջ 48]

Լ.Ա. Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ:[Վիքիպեդիա]

Ուսուցման արդյունավետ հնարները մեծապես նպաստում են աշակերտների առաջդիմության բարձրացմանը:

Ս.Խաչատրյանը աշակերտների մնայուն գիտելիքների մեջ կարևորում է ուսուցանվող նյութը կրկնելը,ամրապնդելը, կիրառելը և կապակցելը[Ս. Խաչատրյան<< Ուսուցման արդյունավետ հնարները >> 2020. Էջ74]

Ա. Մարկովան առանձնացնում է աշակերտների առաջադիմության հետևյալ համակարգը.

1.համակարգել առկա գիտելիքները, կարողությունները, հմտությունները

2.ունենալ ստեղծագործական մոտեցում և ինքնուրույն աշխատելու կարողություն

3.գնահատել սեփական կարողությունները և ձեքբերումները ուսման մեջ

[Маркова А. Виды отношений школьников к учению-М:1984]

Գործնական համատեքստ

Գործնական աշխատանքս իրականացրել եմ 8-րդ դասարանում գրականության դասաժամին:

Փորձել եմ դասաժամին կազմակերպել համագործակցային ուսուցում՝ուսումնասիրելով, թե ինչպես է ազդում ուսուցման այս մեթոդը աշակերտների առաջադիմության բարձրացման վրա:

<<Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու, կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար>>:

Դասի թեման Նար Դոսի <<Ես և Նա>> պատմվածքն է:

Ցանկացած թեմայի ուսուցման ժամանակ մեծ ուշադրություն պետք է դարձնել հետևյալ կետերի վրա.

1.գրավել աշակերտների ուշադրությունը՝ առաջացնելով հետաքրքրություն

2.զարգացնել ընթերցելու,վերլուծելու և գեղեցիկ արտահայտվելու կարողությունը

3.նյութը սովորեցնել կապակցված՝ օգտագործելով դիդակտիկա և համապատասխան մեթոդներ

4.ստեղծել միջառարկայական կապ,արդիականացնել թեման

Ուսումնասիրությունը կատարել եմ մեկ դասարանում՝ բաղկացած տասը աշակերտից:Քանի որ դասարանում սովորում են ԿԱՊԿՈՒ երեխաներ, փորձել եմ թեման դարձնել դյուրին և հասկանալի:

Շատ կարևոր է ճիշտ կազմակերպել դասի խթանման փուլը: Ձեռքիս տակ ունեմ երկու պաստառ՝ <<հաղթել>> և <<պարտվել>>:

Հարց է ուղղվում աշակերտներին.

<<Ինչպիսի հատկանիշներով պետք է օժտված լինի մարդը հաղթելու համար>>:

Հնչում են կարծիքներ, որոնք գրվում են գրատախտակին կամ գունավոր կպչուն թերթիկների վրա և փակցվում պաստառին.

Կամք, տոկունություն, ձգտում, խելք, աշխատասիրություն,հպարտություն (ոչ մեծամտություն), ազնվություն, ինքնասիրություն (ոչ եսասիրություն) և այլն:

Դասարանը բաժանվում է երկու խմբի :Առաջին խմբին հանձնարարում եմ <<Ես>> հատվածը,երկրորդին՝ <<Նա>>-ն:

Խմբերը ձևավորելիս մեծ ուշադրություն եմ դարձնում այն հանգամանքին, որ խմբի մեջ ընդգրկված լինեն տարբեր կարողություններով երեխաներ:

Յուրաքանչյուր խումբ աշխատանքը կատարելուց հետո փորձում է ներկայացնել իրեն տրված հատվածը: Պատասխանում են հարցերին, բնագրից ընթերցում հատվածեր:

Համառոտ ներկայացնում եմ խմբերի կատարած աշխատանքները:

Ես-ը ստանում էր իրավաբանի փայլուն կրթություն: Նա ամբողջ սրտով սիրում էր մի աղջկա, բայց... Օ՛հ, այդ բայցը:Սիրած աղջիկը ամուսնանում է : Ես-ին կլանում է վատ շրջապատը, նա դառնում է հարբեցող և ի վերջո հասնում կործանման:

Պատասխանում են հետևյալ հարցերին:

1.Ո՞վ է ես-ը

2. Ի՞նչ է նրա համար սիրած աղջկա գոյությունը

3.Ինչու՞ փշրվեցին ես-ի հույսերը և սպասումները

4.Ի՞նչն է կամաց-կամաց համակում ես-ին

5.Ինչպե՞ս է ես-ը աստիճանաբար դառնում <<կորած մարդ>>

6.Ե՞րբ և ինչպե՞ս է ես-ը փորձում գտնել իր կործանման բուն պատճառը:

Նա-ն, որ հակադարձում է ես-ին, թափառական, շրջիկ ջութակահար է:Սիրում է Ջուլիետային: Սիրած աղջկա հայտնի երկտողից հետո, բարձրանում է կյանքի աստիճաններով դառնում հայտնի ջութակահար Անտոնիո Բոնվինին:

Երկտողը հետևյալն է <<Հայրս ասաց, որ իմ և քո միջև անանց անդունդ կա:Մենք վերևն ենք, դուք՝ ներքևը, էլ մի գա>>:

Տարիներ անց՝ իր համերգներից մեկի ժամանակ, նա ծոցագրպանից հանում է խնամքով պահպանված երկտողը և տալիս Ջուլիետային: Երկտող, որը ստիպեց նրան բարձրանալ, հաղթել և այդ իրականության մեջ գտնել ճիշտ ճանապարհը:

Պատասխանում են հետևյալ հարցերին.

1.Նախապես ի՞նչ վերնագիր է ունեցել <<Նա>> պատմվածքը

2. Որտե՞ղ են կատարվում գործողությունները

3.Ո՞վ է Ջուլիետան, նկարագրել նրան

4. Ո՞վ է Անտոնիոն

5.Ծովի վրա նավարկելիս ի՞նչ ապրումներ ունեին Անտոնիոն և Ջուլիետան

6.Ջուլիետայի նամակը և պատանի ջութակահարի հետագա կյանքը

7.Նկարագրել արդեն Անտոնիո Բոնվինիի և Ջուլիետայի վերջին հանդիպումը:

Յուրաքանչյուր խումբ ներկացնում է իր կատարած աշխատանքը:Լսում են և արտահայտում կարծիքներ:

Կշռադատման փուլում խմբերի կատարած աշխատանքները ներկայացնում եմ Վենի դիագրամի միջոցով:



Դասի ժամանակ ապահովում եմ նաև միջառարկայական կապը երաժշտության, կերպարվեստի և հայոց լեզվի հետ:

Թեման արդիական է և դաստիարակչական: Ուժեղ և թույլ կամքի մասին պատմող այս երկը ստիպում է խորհել, վերլուծել, քննարկել կերպարների անցած ուղիները և համալրել ներաշխարհը կամքի ուժով, բայց ոչ վրեժով:

<<Վերև ու ներքև, նրանց մեջտեղում անդունդ, ինչքան սերեր, ճակատագրեր է կուլ տվել այդ անդունդը՝>>:

Աշխատանքներն ավարտելուց հետո երեխաները գնահատեցին միմյանց: Նրանց տրամադրվել էր ինքնագնահատման և փոխադարձ գնահատման թերթիկներ: Այս հետազոտական աշխատանքի հիմնական նպատակն այն էր, որ ընտրված մեթոդների միջոցով բարձրացնել աշակերտների առաջադիմությունը՝հիմնվելով համագործակցային մեթոդի առանձնահատկությունների վրա: Ինչպես ասում է Ջեյմս Ուայթսոնը <<Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության >>:Համագործակցության մեթոդի ամենակարևոր պայմանն այն է, որ կարողանաս ապահովել աշակերտների ակտիվ մասնակցությունը և համագործակցությունը: Կարծում եմ ՝ ստացվել է իրականացնել համագործակցային ուսուցման տարրերը, որոնք ըստ Ջոնսոնների հինգն են ՝

1.Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու,աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը:Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

4. Սոցիալական հմտություններ.Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը:

5. Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը: Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:

Ամփոփում

Դասաժամին կատարեցի դիտարկում,թե ինչպես են ընթանում աշխատանքները, արդյո՞ք ապահովված են բոլոր աշակերտների մասնակցությունը:

Ընտրեցի մեթոդներ, որպեսզի թեմայի ուսուցումը լինի դյուրին և մատչելի:

Կազմվեցին տարբեր խմբեր, որոնց մեջ ընդգրկվեցին տարբեր կարողություններով և ունակություններով սովորողներ:Նրանցից յուրաքանչյուրը փորձում էր իր մասնակցությունն ունենալ խմբի աշխատանքներում:

Ինչպես նշել էի, դասարանում սովորում են ԿԱՊԿՈՒ երեխաներ: Օրինակ , երեխաներից մեկը չի լսում, բացակայում է խոսքը:Նա ունի նկարելու ձիրք: Օգտագործելով երեխայի նախասիրությունը՝ նկարչության միջոցով նրան ընդգրկեցի խմբի աշխատանքների մեջ:Նկարեց Անտոնիոյին: Իր մասնակցությունն ունեցավ նաև տեքստային առաջադրանքների կատարմանը:

Հաշվի առնելով բոլոր երեխաների կարողությունները, ունակությունները և հմտությունները՝ նպաստեցինք դասարաանի առաջադիմության բարձրացմանը :

Կարծում եմ , որ այպիսի մոտոցումը նպաստում է նրան, որ դասարանի ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները ևս ձգտում են իրենց մասնակցությունն ունենալ խմբի աշխատանքներին և լավ արդյունքներ վաստակել իրենց խմբի համար:



Ամփոփելով հետազոտական դասի ստացված պատկերը՝ կարող եմ նշել, որ պարզ դարձավ, որ խառը խմբերով աշխատելը զգալիորեն նպաստում է ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների առաջադիմության բարձրացմանը:Նրանք դառնում են ավելի պատասխանատու:

Համագործակցային ուսուցումը ձևավորում է հաղորդակցման հմտություն, աշակերտները սովորում են միմյանցից, կարողանում են ինքնադրսևորվել, պատասխանատու են խմբի աշխատանքի համար:

Իհարկե, շատ կարևոր է նաև ուսուցչի ուղղորդումը և ճիշտ մեթոդների ընտրությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1.Новикова А.<<Педагогика.Словарь системы основных понятий.М:2013

2.Калмикова Е. Проблема преоделения неуспеваемости глазами психолога-М:2002

3. Маркова А. Виды отношений школьников к учению-М:1984

4. Ս. Խաչատրյան<< Ուսուցման արդյունավետ հնարները >> 2020.

5. Համագործակցային ուսուցում https://hy.wikipedia.org